ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 158 - Ա **20 ապրիլի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 43 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 6-ի N 133-Ա որոշման 2-րդ և 8-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Վարկային համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նորակառույց մասնաշենքի կառուցման՝ 2018 թվականի սեպտեմբերի 7-ին ավարտված աշխատանքների արժեքով՝ 942.539.799 դրամով, ավելացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ 94.253 հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10.000 դրամ արժեքով, լրացուցիչ թողարկելու և տեղաբաշխելու միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 43 - Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության, 4.2. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1.148.480.000 /մեկ միլիարդ մեկ հարյուր քառասունութ միլիոն չորս հարյուր ութսուն հազար/ դրամ, որը կազմում է 114.848 /մեկ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր քառասունութ/ հատ 10.000 /տաս հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 114848 /մեկ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր քառասունութ/ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են:»:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գայանե Էլիզբարյանին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին.

2) կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

20.04.2020

X

ԳԱՅԱՆԵ ԷԼԻԶԲԱՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: ELIZBARYAN GAYANE 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ

Կազմված է 20.04 2020թ.
Բաղկացած է 2(երկու)թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ_____

Հավելված

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետի
2020 թ. ապրիլի 20 -ի
N 158 - Ա որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

----------Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից 25.02.2016թ.
գրանցման թիվ 222.120.889405

ՀՎՀՀ 08620315

25.02.2016թ. գրանցված
կանոնադրության թիվ
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

--------- ---------- 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1.148.480.000 /մեկ միլիարդ մեկ հարյուր քառասունութ միլիոն չորս հարյուր ութսուն հազար/ դրամ, որը կազմում է 114848 /մեկ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր քառասունութ/ հատ 10.000 /տաս հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 114848 /մեկ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր քառասունութ/ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (**գրանցված 25.02.2016թ., գրանցման թիվ 222.120.889405**) բաղկացուցիչ մասը: